

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 5.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

25 դեկտեմբերի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Ն. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2016 թ. ուստարվա / կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ամփոփում:
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. 2015-2016 թթ. ուստարվա / կիսամյակի ավարտական քննությունների գրաֆիկի հաստատում:
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. 2015թ. կատարված աշխատանքների հաշվետվություն:
/զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի Ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2015-2016թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի արդյունքները: Քննաշրջանը անցել է համաձայն ժամանակացույցի:

Կան առաջադիմության բարձրացման միտումներ: Դրանց նպաստում են լրացուցիչ խորհրդատվությունները: Նա միաժամանկ հանդես եկավ հանձնարարականներով՝ կապված ստուգարքային լուծարքային շրջանի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցուլյանը, Ք. Վ. Օթարյանը և ուրիշներ: Նրանք ևս ներկայացրեցին, որ քննաշրջանը անցել է կազմակերպված:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2015-2016թթ.

ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը. 09.01.2016-25.01.2016, որը կազմվել է համաձայն ՈւՄՎ կողմից տրված բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույցի: Նա ընդգծեց, որ վերոնշյալ ժամանակացույցը բազմիցս քննարկվել է ամբիոններում և խմբերում:

Ձեկուցողը հանձնարարեց ամբիոններին վերանայել հարցաշարերը, քննական տոմսերը կազմել անցած նյութի հիման վրա: Քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն, քննաշրջանը անցկացնել գրաֆիկին համապատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել ամբիոններին, որ քննական տոմսերը կազմվեն ըստ կրթական ծրագրի:

Օրակարգի երրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2015թ. ընթացքում ֆակուլտետում իրականացված աշխատանքները: Ըստ ուսումնական գործընթացի հաստատված ժամանակացույցի՝ ամբիոնների և դեկանատի համատեղ աշխատանքի շնորհիվ իրականացվել են մի շարք աշխատանքներ: Համակարգչային մասնագիտական լաբորատորիաները օգտագործվում են նպատակին: Ֆակուլտետի խորհուրդը իր նիստերն իրականացրել է ըստ աշխատանքային պլանի: Իրականացվել են նաև նախորդ նիստերում ընդունված որոշումները(հաշվետվությունը կցվում է):

Ֆակուլտետում դասաժամի բացթողում չի եղել, դասախոսական կազմի և աշխատակիցների կողմից կարգապահական խախտումներ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ա. Վ. Ցուցույանը, Հ. Ա. Քամայանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Հանձնարարել ամբիոններին ժամանակին կազմակերպել կոնսուլտացիաներ՝ ընդգրկելով նաև կուրսղեկին:

**ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ
Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԿՅՈՒՂԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ /տարեկան/

Տակուլտետը լինելով ՀՀ հյուսիս-արևելյան տարածաշրջանի միակ պետական բնագիտական հոսքի մասնագիտական կրթօջախ, իր առաքելությունն է համարում և իրականացնում է հասարակայնության ներուժի դրսևորման, երիտասարդ սերնդին գիտամշակութային, բազմակողմանիորեն, մասնագիտական ուղղվածության զարգացման, աշխատաշուկայում արդի պահանջներին համապատասխան մասնագետների և հիմնարար արժեքների ապահովումը:

Որակյալ կրթություն ապահովելու հետ մեկտեղ ֆակուլտետի գործունեության կարևորագույն մասն է կազմում նաև հաստատելու ուսանողակենտրոն միջավայր՝ հարատև կրթության ռազմավարությունը:

Տակուլտետի գործունեության ուղղորդվածության հիմքը կազմում է ռազմավարական ծրագրի հիմնադրույթները, որը իր մեջ ներառում է ծրագրային բարձր չափորոշիչներ՝ ուսման որակի բարձրացում հարատև կրթության, քաղաքակիրթ արժեքների պահպանման և հարստացման կայունությունը:

Հաշվետու ժամանակաընթացքում մշակվել է ռազմավարական նպատակների իրականացման, որակի ներքին ապահովման հայեցակարգ ուսումնական գործընթացի, կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխումները:

Հաշվի առնելով տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից տնտեսության պահանջները, մասնաճյուղի գիտխորհրդի միջնորդությամբ ԵՊՀ գիտխորհուրդը թույլատրեց 2013թ. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտությունը փոխարինել «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտությամբ: Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի բնագավառը հնարավորություն կտա հետազոտական և գիտահետազոտական գործունեություն կատարելու բոլոր այն բնագավառներում, որտեղ ներդրվում են համակարգչային տեխնոլոգիաները և կիրառական մաթեմատիկայի մեթոդները:

Երկրորդ մասնագիտությունը, «Էկոլոգիական քիմիա» մասնագիտությունն էր, որը փոխարինել էր «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությանը՝ արժևորելով քիմիայի դերը էկոլոգիայի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ բնագավառներում: Սակայն դիմորդների շրջանում հետաքրքրություն չգտնելու, չունենալու պատճառով 2014թ. ընդունելությունը իրականացվեց «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությամբ, որը անհրաժեշտություն է աշխատաշուկայում: Այս մասնագիտության շրջանավարտները կարող են իրականացնել հանրապետության ամբողջ տարածքի հողի, անշարժ և շարժական գույքի կադաստրային աշխատանքները:

Տակուլտետի անձնակազմի հիմնական նպատակը գիտելիքի ստեղծումն է, փոխանցումը և բազմաբնույթ իրականացումն է ռազմավարական ծրագրի շրջանակներում: Հարկ ենք համարում նշել, կապված մասնագիտությունների փոփոխության հետ «Քարտեզագրություն և կադաստրային գործ» նոր

մասնագիտության կայացման համար անհարժեշտ է ստեղծել «Քարտեզագրություն և գեոինֆորմատիկայի» լաբորատորիա՝ համապատասխան սարքավորումներով և նյութերով: Անհարժեշտություն է նաև էլեկտրոնային տախտեմետրը՝ թեոդոլիտ:

Ֆակուլտետում 2011-15թ. ուստարիներին իրականացվել է հետևյալ ուսումնական գործընթացը, իր գործունեության հիմքում դնելով մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույց-պլանը.

1. Նշված մասնագիտությունների ուսումնական գործընթացի իրականացման համար մշակվել և իրականացվել է կրթական ծրագրերի բովանդակային, կառուցվածքային փոփոխությունները համահունչ՝ աշխատաշուկայի :
2. Ներդրվել և իրականացվել է որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան:
3. Ապահովվել և կիրառվում է կրեդիտային կրթական համակարգը կրթական բոլոր ծրագրերում և ուսուցման ձևերում:
4. Էական բարելավում է իրականացվել դասավանդման և գնահատման գործընթացներում
5. Ապահովվել է տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը բոլոր գործընթացներում: Այս ուղղությամբ ստեղծվել է մասնագիտական համակարգչային երկու լաբորատորիա, հագեցած ժամանակակից տեխնիկական հնարավորություններով:
6. Ստեղծվել և մշտապես իրականացվում են նախադրյալներ հետազոտությունների ծավալի աճի դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածությանը նպաստող մեխանիզմներ:
7. Իրականացվել են աշխատանքներ դասախոսական կազմի բարելավման ուղղությամբ՝ համապատասխան որակի հավաստման համալսարանական չափանիշներին: Ֆակուլտետի շրջանավարտներից Կարեն Հայկի Հովսեփյանը դարձել է ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու և համալրել է դասախոսական անձնակազմը:
8. Բարելավվել է ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները՝ արդիականացվել և նորացվել է լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերին համապատասխան:
9. Բարելավվել է ուսանողների բավարարվածության մակարդակը, ուսումնառությունից՝ ապահովվել է տեղեկատվական ռեսուրսների համակարգի մատչելիությունը և արդյունավետ օգտագործումը
10. Ակտիվացվում է ընդունելության մարքեթինգային գործընթացը՝ պահպանվում է կապը դիմորդների հետ, որը նպատակաուղղված է իրականացնելու դիմորդների ներհոսքը:

11. Ըստ ուսումնական գործընթացի ժամանակացույցի հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել և իրականացվում են ուսումնական պլանով նախատեսված ուսումնական պարապմունքները ըստ նախատեսված ժամաքանակների: Կազմակերպվել են ընթացիկ ստուգումները, ընթացիկ քննությունները և քննաշրջանը:
12. Ամենօրյա աշխատանք է իրականացվում ուսանողների դաստիարակչական, կարգապահական աշխարհայացքի ձևավորման համար:
13. Ամբիոններում առկա են են մասնագիտությունների կրթական ծրագրերը, կրթագիրքը և դասընթացների աշխատանքային փաթեթները /պորտֆոլիո/:
14. Ընդհանուր մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի դասախոսների կողմից զեկուցումներ և դասախոսություններ են կարդացվել օտար լեզուներով. Մ. Ա. Զաքարյանը զեկուցում է կարդացել անգլերեն լեզվով, Ա. Վ. Ցուցուլյանը, Վ. Խ. Նավոյանը, Կ. Հ. Հովսեփյանը և Ա. Ա. Ամիրյանը դասախոսություն են կարդացել ռուսերեն լեզվով:
15. Պարբերաբար կարդացվում են զեկուցումներ երեք մասնագիտությունների ուսանողների կողմից
16. Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչի նախաձեռնությամբ ԵՊՀ-ից հրավիրվել և գիտական զեկուցումներ են կարդացել ֆ.մ.գ.թ. Սուրեն Բալիկյանը „Ծրագրային ապահովման նախագծում. Նախագծման ձևանմուշներ և հակաձևանմուշներ,, և Ներսես Խաչատրյանը „Փնտրման և տեսակավորման դասական ալգորիթմներ: Ալգորիթմների ծրագրային ապահովման մշակում և բարդությունների գնահատում,, թեմաներով:
17. 2015թ. հրատարակված գիտական հոդվածներից երկուսի համահեղինակներ են դարձել ԾԻՏ ամբիոնի դասախոսներ Ռ. Ռ. Քամայյանը և Ա. Ս. Սիմոնյանը: